Բարև՛, սիրելի՛ մարդ,

Անունս Ումիդ է, ես Բաքվից եմ: Ինչպե՞ս ես: Կարծում եմ՝ քեզ մոտ ամեն ինչ կարգին է:

Այս նամակը գրելու նպատակս քեզ խաղաղության կոչ անելն է: Գիտեմ, որ տարիներով մեր երկրները պատերազմական իրավիճակում են գտնվում: Երկու երկրներն էլ կորուստներ են կրել: Քեզ մի հարց տամ. այսքան կորուստ, այսքան մահ հանուն ինչի՞ էր պետք: Այս աշխարհն ամբողջ մարդկության համար է, ինչո՞ւ պետք է մարդիկ թշնամու պես ապրեն, այլ ոչ թե եղբայրների: Կյանքը շատ կարճ է, սիրելի՛ հարևան, կգա ժամանակ, երբ մենք այս աշխարհում այլևս չենք լինի: Կարծում եմ՝ այս սառը հարաբերությունները պետք է մի կողմ դնենք ու ամբողջ աշխարհին հղենք խաղաղության ու հանգստության ուղերձ: Այս աշխարհը մեզ բոլորիս համար է: Նապոլեոնի, Ալեքսանդր Մակեդոնացու, Սուլթան Սուլեյմանի նման հանճարները նույնպես մահկանացուներ են եղել: Ինչո՞ւ մենք պետք է մի բուռ հողի համար միմյանց թշնամի լինենք: Կարծում եմ՝ մարդկությանը կփրկի խաղաղությունը:

Ես կարծում եմ, որ դու համամիտ ես իմ մտքերի հետ: Չնայած մենք տարբեր ազգեր ու մշակույթներ ենք ներկայացնում՝ ըստ իս՝ երկուսս էլ կարծում ենք, որ խաղաղությունն է կարգավորման միակ ուղին:

Ճիշտ է, տարիներ ի վեր մեզ ասում են, որ դուք մեր թշնամին եք, ձեզ էլ ասում են, որ մենք ձեր թշնամին ենք: Սակայն, իմ կարծիքով, մենք այս կարծրատիպերը պետք է կոտրենք: Ես իմ կյանքում միայն մեկ անգամ եմ հայ տեսել, այդ ժամանակ Ռումինիայում էի, նրա հետ շատ զրուցելու հնարավորություն չեմ ունեցել: Ուզում եմ՝ մի օր քեզ հետ զրուցել, հասկանալ, թե ինչն ինչպես է: Շատ եմ ուզում իմանալ, թե դու մեր հանդեպ ինչ վերաբերմունք ունես: Եթե ստացվի, կարծում եմ մենք այս ծրագրի շրջանակում կհանդիպենք և երկար–երկար զրուցելու ժամանակ կունենանք: Անհամբեր սպասում եմ, թե երբ այս նամակը կհասնի քեզ: Կարծում եմ, որ ոչ միայն մեզ երկուսիս, այլև երկու ժողովրդի համար էլ ամեն ինչ իր լուծումը կգտնի:

Հարգանքներով՝

Խաղաղասեր ադրբեջանցի Ումիդ